

ՅԱԳԱՔԱԿԱՆ

ԼՈՒՍՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽԱՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 9 ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ № 9

ՈՒԱՐ ՍԿԱՆԿԻՆ

# ՄԵԾ ՃԱՆԱՊԱՐՀԸ

ՊԻԵՍ 4 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

Ազատ բարգմ. Հար. Փետրոսյան յիշ Գար. Հակոբյան

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929

25 NOV 2009

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԽՍԱՎՈՐՈՒԹ ԳԼԽ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ  
№ 9 ԲԱՆԳՅՈՒՆ ԹԱՏՐՈՆ № 9

891.71

Ա 57

ՈՒԱՐ ՍԿԱԼԿԻՆ

# ՄԵԾ ՃԱՆԱՊԱՌԸ

Պիես 4 գործողությամբ

Ազատ բարգմ. Հար. Պետրոսյան լեկ Գար. Հակոբյան

14405-57



31 JUL 2013

13827

105 VON 85

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱԿԻՄ ՊԱԽՈՄՈՎԻՉ ԿԱՍՅԱՆՈՎ.—Միջակ գյուղացի, 50 տարեկան:

ՊԵԼԱԳԵՅԱ.—Նրա կինը:

ՄԱՔՍԻՄ.—Նրանց վորդին, կռմունիստ, 25 տարեկան:

ՅԵԳՈՐ ՄԻՐՈՆԻՉՉ.—Ակիմի փեսան, գյուղխորհրդի նախագահ, տնվեսա, 30 տարեկան:

ՄԱՐԻԱ.—Նրա կինը, Ակիմի աղջիկը, 27 տարեկան:

ԱԼԵՔՍԵՅ ՄԻՏՐՈՖԱՆՈՎԻՉ.—Խանութպան, 45 տարեկան:

ԱՐԻՆԱ.—Յերիտասարդ այրի կին:

ՏԻՏ.— { Զքավոր գյուղացիներ:

ՊՅՈՒՏ.— { Միջակ գյուղացիներ:

Գյուղացիներ, կանայք, յերիտասարդներ:

Հր. № 868 Գրառեպլար № 1047 (բ) Տիրաժ 1500  
Պետական տռաջին տպարան Վաղարշապատում  
Թատրոնի գաղտնաբառ՝ № 259

## I ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Փողոց Ակիմի խրճիթի առաջ, Ակիմը նստած ե գերանի  
կտորի վրա ու նորոգում ե փայտե տափանը:

**ԱկիՄ.**—(Ինքն իրեն խոսում է): Եղ ժւր ե քշում, և: Աչ քեզ հի-  
մար մարդ: Մարդիկ առանց են ել քիչ ե մնում իրար միս  
ուտեն, ինքն ելի հենց զլխին զոռ ե տալիս: Թռփ անի  
իրար զլխի... Թռփ արա, թռփ արա՝ տեսնենք: «Ռւրիշ կերպ  
չե լինի»: Իսկ յես ասում եմ՝ կլինի: Ամեն մեկին մի բուռը  
հող են տվել ու կպցրել մի տեղից, թե՝ գնա տիրություն  
արա: Բաղըդ զցել բոստանդ անկել ես... Գնա՝ սիրտդ ու-  
զածին պես տնտեսություն արա: (Աշխատում ե: Պառզա):  
Ե՛լի հենց իրենց եղն են քշում: Համա թե բան գուրս եկավ:  
Ել մի ասի... Մեկ տեսար եստեղ մարդ սպանեցին, մեկ՝  
ենտեղ... Գտանք ելի: «Մեր ասածն ե», — ասում ե: Բա ժւր  
ե եղ ձեր ասած արդարությունն, և: Ախար ժւր ե, ժւր: Ես  
ֆլան, են՝ ֆտան, իսկի մեկն են չի: Բա ժւր ե, ժւր, եղ  
լավը ժւր ե անտկվել: Ռւզեցիք կաքավի գնաւ, զարդընն  
ել մոռացաք: (Աշխատում ե: Պառզա):

**ԱլեքՍեՅ ՄԻՏՐՈՅԱՆՈՎԻԶ.**—(Մոտենում ե): Բարնկ, Պախոմիչ:  
Տափանն ես սարքում:

**ԱկիՄ.**—Հա, բա ի՞նչ, սարքեմ տեսնեմ, Ալեքսեյ Միտրոֆանովիչ,  
կարժանանամ այսոր ես տափանով արտս տափանել — զյուղն  
իրար զլխով ե դիպել:

**ԱլեքՍեՅ ՄԻՏՐՈՅԱՆՈՎԻԶ.**—(Կուանալով կամացուկ): Քեզ թա-  
գուն բան տաելու յեմ յեկել, Պախոմիչ: Իրավ վոր իրար  
զլխով են դիպել: Հաստատ իմացել եմ՝ այսոր ժողով ե լի-  
նելու... վորտեղ վոր ե՝ հիմա զանգերը կքաշեն:

**ԱկիՄ.**—Բաշում են՝ թող քաշեն: Թե վոր ագարակագլուխ լինի,

վոչինչ, հոժար եմ: Ճարն ինչ, այնպես դարի լենք հասել,  
վոր չտաս ել—զոռով կառնեն:

**ԱԼԵՔՍԵՅ ՄԻԾՐՈՅԱՆՈՎԻԶ.**—Այդպիս ել բան կլինթ, Պախո-  
միչ, ուրեմն մենք զուր ենք մեջք ջարդել, քրտինք թափել:  
ինչ, մեր աշխատանքն ուրիշներն ուտեն:

**ԱԿԻՄ.**—Ափոս ե: Բայց ինչ արած, դարն և եղան, Ալեքսեյ  
Միտրոֆանովիչ:

**ԱԼԵՔՍԵՅ ՄԻԾՐՈՅԱՆՈՎԻԶ.**—Դարը, դարը—առաք ու անցաք:  
Բա մենք, ուր քշեն՝ պիտի գնանք: Կոմունա ել վոր քշեն,  
Ելի պիտի հոժարանանք:

**ԱԿԻՄ.**—Դու ել շատ գենը գնացիր:

**ԱԼԵՔՍ. ՄԻԾՐ.**—Բոլոր զոներն ել գենն են տանում: Մեկ ել են տե-  
սար՝ մեզ քշեցին ու մի անաստված կոմունիստ դրին գլխնե-  
րիս... Դե, կառավարի: Դե, հրամալի: Իսկ մենք—ասածն աւ-  
նենք: Պիտի ասեն՝ աստծուն մի աղոթեք, ժամ մի զնաք,  
շրպվեն մեկ զաղանից կերեք ու չլեմ-չիմանամ՝ ձեն ու  
ծպտուն հանեք: Ես, ոո, Պախոմիչ, ճորտությունից զոռ  
կլինի, կոռ ու բեկառից ել՝ ծանր: Այ, թե ինչ դարի լենք  
հասել:

**ԱԿԻՄ.**—Դե դու ել լեղակտուր մի անի, ե: Մենք ել մարդ ենք, մի  
բան ել մեր ձեռից կգա հա:

**ԱԼԵՔՍ. ՄԻԾՐ.**—Ասելու ե մենակ, թե չե քո աչքն ել դեն և  
ֆանդով մարդիկ են: Իսկի չես ել իմանա, թե ինչպես թո-  
լողեցին... Դու դարդ մի անի, քո Մաքսիմը մի գլուխ հենց  
գալիք կյանքից ե խոսում, վոր գովասանքի տուտը բաց ե  
անում, ել դու պրծմար... Պահ, պահ—գրախտ ու արքայու-  
թյուն ե լինելու....

**ԱԿԻՄ.**—Մաքսիմին լիս տղա չեմ հաշվում: Հենց եղ պատճառով,  
հենց եղ բանի համար:

**ԱԼԵՔՍ. ՄԻԾՐ.**—Կտեսնես, նա քո սունը կողոցի: Դու իմ ես  
խոսքը լավ միտ պահի: Կամաց-կամաց վոտիդ տակը կփորի:

**ԱԿԻՄ.**—(Պառզայից հետո): Հենց հիմա լիլ փորում ե, ելի, Ալեք-  
սեյ Միտրոֆանովիչ... Մարդ վոր խորը մտածում ե, տես-  
նում ե, վոր առաջվանը չի: Չես ել ուզում, ելի չի լինում:

**ԱԼԵՔՍ. ՄԻԾՐ.**—Բանն ել հենց այդ ե, Ակիմ: Յերկախս խոսքն  
ել մեկ պիտի լինի: Մեկ պետք ե լինի, մեկ: Թե չե՝ բան-  
ներս բուրդ ե: Ես անգամը վոր մեզ շուռ տվին, մեր տեղը  
գերեզմաններն ե: Պիտի ասեն՝ կուլակ, բավական ե՝ ինչ

վոր առուտուր արիր. հայդա, փասա՛փուսեղ քաշի՛ գուքանդ  
փակի: Կգա, եկ որն ել կգա: Պիտի սկսենք, Պախոմիչ: Յեկ  
քանի կարելի լիւ—շնուր:

**ԱԿԻՄ.**—Սկսել կարելի լիւ, բայց թե ինչպես, ինչ կերպ:

**ԱԼԵՔՍ. ՄԻԾՐ.**—Ամեն կերպ: Այ, հենց մեկը լիս, —ինձ ձախնից  
զրկել են: Հիմա ժողովում լիս լեղած-չեղած՝ մեկ ե. ում  
պետքն եմ:

**ԱԿԻՄ.**—Զախը, ինարկե վոր... Զախը մեծ բան չի, Ալեքսեյ,  
Միտրոֆանովիչ... բայց ինչքան չլինի, ելի հենց ցավ ե:  
Զախը պիտի ձեռք բերել, պիտի ունենալ:

**ԱԼԵՔՍ. ՄԻԾՐ.**—Կորչում ե՝ թող կորչի գրանց ձախնը: Յես ու-  
զում եմ՝ քեզ մի ձամպա ցուց տամ: Տեսնում ես են հի-  
մար՝ փալտի կառը Տիտը. լերեք տարի մեր դաշնը հոտազ  
եր: Բա իսկի կարելի լիւ նրա հողը, իմը, կամ քոնը համե-  
մատել: Նրա արալ շան աղբի մեջ կորել եր, մեկ տափարի  
աղբն եր պակաս, իսկ լիս ու զու մեր արտերն ամեն տա-  
րի պարարտացնում ելինք: Պիտի ասել, վոր տեղով վոսկի  
ելինք փոռում: Վոսկի: Նրանը քոլ ու քոսի մեջ խեղդվում  
եր, իսկ մերոնքը մեր մատներով ելինք բեջարում: Հիմա  
ել բողազ են ճղում, թե՝ նախարի անենք, չափով բաժանենք:  
Անպետք հողը քո ջանին պիտի բաշեն, իսկ պարարտաց-  
րան իրանց վերցնեն: Բա ել ինչ ճշմարտություն, ինչ ար-  
դարություն:

**ԱԿԻՄ.**—(Գլուխը բարձրացնելով): Վոր քոռանան, հողարաժանու-  
թյուն չեն տեսնի: Չեմ իմանում՝ թե ագարակագլուխ լինի,  
հոժարանամ: Միենույնն ե, վոր ապրել չի լինի: Իրար միս  
ենք ուտում: Չեմ իմանում, թե ամենքս չի կողմ ցրկենք—  
բանը լավանա:

**ԱԼԵՔՍ. ՄԻԾՐ.**—Ագարակովը ել բան գուրս չի գա, Պախոմիչ:  
Նրա համար, վոր լեթե քեզ համ տասնհինգ գեսատին տա-  
լին, համ ել հետո առնելու ճար ունենալիք... թե չե՝ կամն,  
ու աչքը պիտի դնես տվածին, վոչ ճար ունես, վոչ ճամպա:  
Առնելը զեռ մի կողմ թողած, տված ել չես կարողանում խելքը  
գլխին տիրություն անել: Ինարկե, ժողովուրդը գլուխ ե  
ջարզում, ուզում ե լավ որ տեսնի: Մարդ մի քիչ վոր են-  
պես լավ խորը մտածում ե, ես որերից զզվում ե: Այ, աղ-  
մուկն ել հենց սրա համար ե: Ինչքան հող կա՝ հիմա բոլո-  
քը վարում ենք, ել գանդատ-մանգատ չկա: Ուրեմն մենք

մեղ մի գուռ պիտի բաց անենք: Սիրադ չառնվի՝ դու մի քիչ  
քեզ գրոտել ես, դուքան մուքան ես գրել քեզ համար լա-  
վից-վատից ապրում ես: Չեռներիս հալը—տես: Հիսուն տա-  
րեկան եմ, և: Կարծիմ, վոր ժամանակն ե հանգիստ ապրե-  
լու, բայց դու արի-տես, վոր մի որ ձեռներս ծալեմ, մու-  
րացկանի պես պիտի դռնե-գուռ ընկնեմ: Դես ընկնելով, դեն  
ընկնելով՝ մարդ իր կռների զուով ապրում ե: Այ, ես ե, հա:  
ԱԼԵՔՍ. ՄԻԾՐ.—(Նեղացած): Ինչպես տեսնում եմ, Պախոմիչ, իմ  
գալը քեզ մոտ զուր ե: Յերմում ե, վոր դու յել ես նրանց  
կուսակցության մեջ—աչքդ դենն ե:

ԱԿԻՄ.—Զե-ե, Ալեքսի Միտրոֆանովիչ, աստված իր արդար  
գուռը մեզ վրա բաց կանի:

ԱԼԵՔՍ. ՄԻԾՐ.—Դու ել բան ասիր, ելի: (Խորհրդավոր): Քեզ ա-  
սում եմ կազմակերպություն ե պետք, դու ելի լեզվիդ զոռն  
ես տվել:

ՊԱՎԵԼ.—(Հանկարծ յերեվալով): Բ.հը՝ Կազմակերպություն: Լավ,  
լավ: Կուտես—չես ուտի... Քեզ կազմակերպություն ցուց  
կտանք:

ԱԼԵՔՍ. ՄԻԾՐ.—Դու գորտեղից ծլար: Ի՞նչ ես ականջ զնում:  
ՊԱՎԵԼ.—Լավ չեր լինի, վոր քողտիկիդ մեջ վեր ընկնելիր: Հի-  
մա վոր մերոնք յեկան,—սև կազմակերպություն կրերին  
գլխիդ: Տեսեք, թե մոքավու ինչեր ե անցկացնում:

ԱԼԵՔՍ. ՄԻԾՐ.—(Ակիմին): Ժամանակն ե, յես գնում եմ, Պախո-  
միչ: (Յես-յես նայելով, կամաց-կամաց դուրս ե զնում):  
ՊԱՎԵԼ.—(Խանուրպանի նետելից): Խօսանիր տես: Զե, բարեկամ,  
քո տեսածը չկա: (Ակիմին): Փեսադ տանն ե, թե չե:

ԱԿԻՄ.—Տանն ե: Ի՞նչ պիտի ասես:

ՊԱՎԵԼ.—Պետք ե: Ժողով ենք անելու: Հողալին հարցը պիտի  
վճռնք: Առանց զուովսորհրդի զլուխ չի գա:

ԱԿԻՄ.—(Գլխով ե անում դիպի խոնիրի կողմբ): Ներս գնա: (Պա-  
վելիլ ներս ե մտնում): Հիմա ելի վարարած զետի պես ձենը  
պիտի ցցի: (Ներս են մտնում Տիտն ու Պյոտրը):

ՏԻՏ. —Բարնվ, Պախոմիչ: Ինչպես իրեռում ե՝ փեսադ իր քեֆին  
հանգիստ քնած ե: Առանց նրան ել կավաքենք: (Զայն ե  
տալիս դեպի փողոց): Ել, Միտր, զանգերը քաշի: Ել  
ի՞նչ ես տնտեղում: Զանգերը տուր, թող ժողովի գան: Ել ում  
պիտի սպասենք: Գործ ունեցողը կզա... Հիմա զանգերը կքա-  
շի... Գնաց... Տեսնում են՝ ինչ դալբի են, սպանեա՝ ժողովի  
շեն դու:

ՊՅԱՅՏՐ.—Վերադարձին մերոնց կհասկացնենք: Իսկ հիմա գնանք:  
(Դուրս են զալիս: Լավում ե զանգի թրուացող ձայնը: Ակիմի  
խոնիրից դուրս ե վազում Յեզոր Միրանիչն ու Մահետելից  
Պավելի):

ՅԵԳՈՐ ՄԻՒՐՈՆԻՉ. —Ո՞վ կարող ե համարձակվել՝ առանց իմ թուլ-  
տվության ժողովներ անի: (Զայն ե տալիս դեպի փողոց): Մի-  
դոր, ձենը կտրի: Քեզ ասում եմ: (Զանգահարությունը լուսն  
ե):

ՊԱՎԵԼ.—Յեզոր Միւրոնիչ, բա ասածդ ի՞նչ ե: Բոլորն ուզում են  
ժողով անել իսկ դու հակառակ ես զնում: Զանգերը պիտի  
քաշել, առանց այդ՝ բան չի լինի, չեն հավաքվի:

ՅԵԳՈՐ ՄԻՒՐՈՆԻՉ. —Յես գեմ չեմ. բայց ինչնեւ յեք կարգը խան-  
գարում: Ինչու առանց իրավունքի Այս բանի համար յես ձեզ  
կտուգանեմ... Կտուգանեմ, հա, հասկացաք:

ՊԱՎԵԼ.—Տուգանիր՝ ինչքան կուզես, միայն թե ժողովը հարկա-  
վոր ե: Հողալին հարցը՝ զլիսավոր հարցը պետք ե վճռնենք:

ՅԵԳՈՐ ՄԻՒՐՈՆԻՉ. —Ինչու առանց հարցնելու, քեզ հետ եմ, և:  
Դուք ինձնից իրավունք առել եք: Վ.հ: Յես դեռ չեմ տվել:  
Դուք ինձնից իրավունք դեռ չեք առել:

ՊԱՎԵԼ.—(Մերմական յեղանակով): Յեզոր Միւրոնիչ, մեր գործը  
յետ մի զցեք, դե հակառակ մի գնաք, և: Ասեք, թող զան-  
գերը քաշեն, հա:

ՅԵԳՈՐ ՄԻՒՐՈՆԻՉ. —(Յանր պիրք բռնած՝ կանգնել ե): Այսու...  
Պիտի մտածել: (Պատուա): Կարող ե պատահի՝ թողնենք այ-  
սոր ժողով անեք:

ՊԱՎԵԼ.—Խոսք չկա, վոր կթողնեք:

ՅԵԳՈՐ ՄԻՒՐՈՆԻՉ. —Դե լավ, թող եղակս լինի, իրավունք տալիս  
եմ: (Զայն ե տալիս փողոց): Ել, Միտր, զանգերը քաշի: (Պավելին):  
Իսկ զու մի եստեղ արի: (Ներս են մտնում: Զան-  
գը տալիս են: Մախիմիր կացինը ձեռքին մտնում ե Ակիմին):

ՄԱՔՍԻՄ. —Մեր ու Յեզորի արանքինը լավ պնդացրի: Իրեք չա-  
րեքանոց ենպես մի զարաղաջի ցից տվի ու ձողերը կա-  
պեցի ցցից վար... Իսկ իվանի կողմինը չկարողացա զգիմ—  
սաղ թափրավել՝ զետեղովը մեկ ե յեղել:

ԱԿԻՄ.—Վ.հոց թե իվանի կողմինը: Երեկ ախը ցանկապատը  
տեղն եր:

ՄԱՔՍԻՄ. —Ո՞վ ե իմանում—երեխա-մերեխեքը շուլուխ արած  
կլինեն:

**ԱԿԻՄ.**—Ի՞նչ երեխա, ի՞նչ բան: Նախանձից ուրիշներն արած կլինեն: Ե՛, լավ, տիր եղ ցանկապատն ում ի՞նչ նեղություն ե տալիս, ե՛:

**ՄԱՔՍԻՄ.**—Վոր եղաքես ե՝ կարող ե տավար-մավար դիմած լինի: **ԱԿԻՄ.**—Դու ել ինձ բան պիտի սովորեցնես: Երեկ իս իմ ձեռ ոռվն եմ փորձել: Ենակես պինդ կանգնած եր, վոր իսկի իրար դալու բան եր: Ասենք եղ ել ևս զրուստ ասում—կարող ե տավար արած լինի, բայց թե ե՞ն տավարը, վոր իրան մարդ և ասում: Ե՛, մարդիկ, մարդիկ: Դու ել կոմունան ևս առել—անցել Մարդկանց բոլորը պիտի պատ քաշել, ամենքին մի պատի մեջ դնել ևս քեզ, ես ել ինձ: Ե՞ն ել՝ պատերը պինդ պիտի անել, թե չե՞նով ուժով ե՝ մեկ ել տեսար քանդեց ու կոկորդից բոնհեց «Յալլա, եստեղից գնորս, իմն ե՞ս»: Այ, թե ինչեր կան, հա: Մաքսիմ, իմաթրդ չմնա՝ դու դեռ ջանել ևս, ջանել:

**ՄԱՔՍԻՄ.**—Սուտ ե: Հայրիկ, մարդիկ ենքան ել վատ չեն: Կրանքի պայմանները պետք ե փոխել, ու մարդիկ կլավանան:

**ԱԿԻՄ.**—Սուտ, սուտ, չեմ ուզում լսել:

**ՄԱՔՍԻՄ.**—Իմ ու քոնը մեր տունը քանդել են, վոր կոռ մունան մեզ պիտի ոգնի: (Յեզոր Միրոնիչն ու Պավելը դուրս են գնում խանիքից ու նայում են փողոցի յերկարությամբ):

**ՅԵԳՈՐ ՄԻՐՈՆԻՉ.**—(Գետի Պավելը) Ես ի՞նչ բան ե, չե՞ն հավաք գում (Գոռում ե փողոցն ի վեր): Միշտոր, տղայիդ մեկ ուղարկի՝ թող ժողովի ձեն տա:

**ՊԱՎԵԼ.**—Տուտն երեաց. դալիս են: (Անցնում են):

**ՄԱՔՍԻՄ.**—(Հոր): Հայրիկ, դու ժողովի պիտի չգնա:

**ԱԿԻՄ.**—Գնում ես—դու գնա, յս տափանը դեռ չեմ վերջացրել: Թե բան ե՝ հոդի մասին խոռք լինի՞ դու հողաբաժանություն ուզի, մենակ թե՝ ագարակագլուխ լինի, հա:

**ՄԱՔՍԻՄ.**—Զե, յս ագարակագլուխ համաձայն չեմ: Իմ ուզածը կոլեկտիվ վարուցանքը—արտելն եւ Արի երկուով ել գնանք:

**ԱԿԻՄ.**—(Անքափական): Տնտեսություններս մեկ ե, բայց ամեն մեկս մի կողմ ենք քաշում: Ուզում ես՝ դու տափանը շինի, յս գնամ: Մենակ կգնամ: Թե ուզում ես՝ առ:

**ՄԱՔՍԻՄ.**—Լավ, հետո կշինեմ: Ժողովը տափանից առավել ե:

**ԱԿԻՄ.**—Առավել ե, Դու իմ վիճն ես զարկում, իսկի իմաննում ես, թե ի՞նչ ես անում, այ վորդի: Թեղ պահել, մեծացրել եմ, բայց չգիտեմ, թե ի՞նչու: Հոդիս ուտելու համար, ել ի՞նչ կա վոր:

**ՄԱՔՍԻՄ.**—Հայրիկ, ինչ ուզում ես՝ ասա, յես գնում եմ: Այնաեղ ինձ սպասում են: (Կացինը վայր ե դնում ու դուրս է գնում: Մոտենում է Տրոֆիմը):

**ՏՐՈՖԻՄ.**—Վայ, վայ, վայ, եղ ինչեր են կատարվում, Պահոսմիչ, ինչեր:

**ԱԿԻՄ.**—Ո՞վ ե հասկանում, թե ինչեր են կատարվում:

**ՏՐՈՖԻՄ.**—Կասես մեկը ժողովրդի պոչի տակը բիզ ե խոթում: Մի հարցնող չկա, թե ինչի վրա յեն: Կալվածատիրոջ հողը ձեռքից առել են: Ե՛, ինչ անենք, առել են՝ առել—շատ ել լավ են արել: Ի՞նչ գործդ ե—ապրում ես՝ գու քեզ համար հանգիստ ապրի: Զե, ճար չկա, տիտիկ չի անում: Սատկելն եկել ե: Բա եղքան ել յերես առնել կլինի, վոր ժողովուրդն ե յերես առել:

**ԱԿԻՄ.**—Հա, ելի, քանի՞ր Տրափիմ, կասես սարից զլորվող աղի մինի: Վոր զլորվեց, ել չի բոնիի: Աշքե-աչք՝ ձեռքից գնում ե, ելի: (Յերկուսով ել դուրս են գնում: Զանգահարում են: Արինան վազ ե տախ դեպի յուսամուր):

**ԱՐԻՆԱ.**—(Լուսամուրը ծեծում ե): Մարիա, տանն ես:

**ՄԱՐԻԱ.**—(Յերկալարը լուսամուրի առաջ) Ի՞նչ ե, Արինա:

**ԱՐԻՆԱ.**—Արի գնանք ժողովի: Ի՞նչ կա՝ նստել ես՝ ասանք: Ասում են, վոր վաթուուն հոգի պիտի գնան: Գնանք, գնանք:

**ՄԱՐԻԱ.**—Հարկավոր ե գնալի Բայց ի՞նչ անեմ—մարդս շատ ու կարիքն ե: Համ գնաց, համ ել ինձ ասում եր՝ «Յո ի՞նչ գործն ե ենտեղ»: Զոր ատկազ արակ ու անտկվեց:

**ԱՐԻՆԱ.**—Ել ի՞նչ ես զար խոսում, վոր հավասարություն ե՝ հավասարություն: Զեսիդ բանը թափելիր ու գնայիր: Յես լինեցի՞ չեի՞ զիմանա: Թեկուզ տրաքեր ել՝ իմ ասածը կանելի: Կաս, հա (Մարիային զիտով ե անում ու դուրս գնում: Պառզա: Քիչ հետո Մարիան ե դուրս գնում: Դուրս է գալիս ու կանգ առնում. դեպի ժողովը նեան ե անում: Ականց ե դնում):

**ՄԱՐԻԱ.**—(Հասատուն): Յեզրայրս կհաղթի: (Արագ դեպի ժողովի ե գնում):

ՎԱՐԱԴՐՈՒՅՐ

## II ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

**Ակիմի խրճիթը:** Յերկու լուսամուտ: Առաջակողմի անկյունում սրբապատկերներ, սեղան, աթոռներ (տաքուրետ), նըստարաններ: Մյուս կողմի տակ գրադարակ՝ զրբերով, մահճակալ: Մութն ընկնում ե: Բեմի վրա Ակիմը, Մաքսիմը յել Մարիան:

**ՄԱՔՍԻՄ.**—(Գրադարակի մոտ): Քույրիկ, դու քո վիրքը կարդացել ես:

**ՄԱՔԻՄ.**—Ենք: Դրել եմ յերեսը: Են կանաչ շապկով գրքի վրա:

**ՄԱՔՍԻՄ.**—Տեսնում եմ, դու: Հիմա ես կարդա: (Տալիս ե): Առաջ ժողովին հասիր, չոշշանա: Մեր կուսակցության մեջ ամեն ինչ ձայն տալով ե: Թե չե՞ եղ տեղացիք մեզ չորին կթողնեն:

**ՄԱՔԻՄ.**—Լավ, յես կգամ, իսկ հիմա մի քիչ կարդամ... (Նստում ե լուսամուտի մոտ: Մաքսիմը դեպի դուռն ե զիռում):

**ԱԿԻՄ.**—Մաքսիմ:

**ՄԱՔՍԻՄ.**—Ի՞նչ ե, հայրիկ:

**ԱԿԻՄ.**—Դու եղ ուր ես եղած շտապում:

**ՄԱՔՍԻՄ.**—Ինքդ գիտես, ալսոր վճռական ժողով ե:

**ԱԿԻՄ.**—Ուրեմն բաժանվեցի՞նք, վորդիս:

**ՄԱՔՍԻՄ.**—Ի՞նչ բաժանվելու բան կա, արի մեզ հետ:

**ԱԿԻՄ.**—Հերդ պիտի քո հետեկց գնա, թե՞ դու հորդ հետեկց: Աւընթի քո ասածն ե:

**ՄԱՔՍԻՄ.**—Բանն եղ չի: Յես բոլորին եմ լավություն, լավ կլանք ուզում: Հենց այդ լավ բանի համար ել յես ընտանիքից կտրվում եմ:

**ԱԿԻՄ.**—Բա յես լավը չեմ ուզում: Ի՞նչ, կարծում ես, թե յես անխելք եմ: Անհասկացող եմ: Բա միթե յես բոլորին ել լավը չեմ ուզում:

**ՄԱՔՍԻՄ.**—Ո՞վ ե իմանում—գուցե և ուզում ես:

**ԱԿԻՄ.**—Հենց բանն ել եղ ե, վոր չես իմանում: (Պառվայից նետո): Միայն թե յես լավը ուրիշ կերպ եմ հասկանում: Քո ձեռով կապը քո վիզն ես զցում ու կարձ խելքովդ եղ բանը չես տեսնում:

**ՄԱՔՍԻՄ.**—Մուտ ե, ի՞նչ կապ կա, վոր ի՞նչ գցեմ վիզս: Ճիշտ ե, հայրիկ, յես ու դու մի խոսքի չենք զալիս, մեր ասածն իրար չի բռնում:

**ԱԿԻՄ.**—(Կամացուկ): Քեզ ափսոսում եմ, տղաս, աչ թե ի՞նչ, Յես մնում եմ մենակ կանգնած: Փեսից հույս չունեմ, նրանից լավ բան չեմ սպասում: Յետ դառնալիք, լավ կլիներ, Մաքս սիմ, քանի դեռ ուշ չե:

**ՄԱՔՍԻՄ.**—(Հաստատուն): Վաչ, դեպի յետ յես ճանապարհ չունեմ: Առաջ պետք ե գնամ, միայն առաջ, հայրիկ:

**ԱԿԻՄ.**—Դու ում հետ ես գնում: Տիտն ու Պիոտրը քեզ համար աշխատանք պիտի անեն: Նրանք բոլորն ել սիրում են ուրիշների վիճն հեծնել: Իսկ ձեր կուսակցությունն եսպես ե: Վոչ խաղելին կա, վոչ բան, բոլորը լոթի-փոթի յեն: Բա մարդ ել նրանց հետ բան կրոնի:

**ՄԱՔՍԻՄ.**—Կանենք: Նրանք հիմա աշխատելու վոչ տեղ ունեն, վոչ բան:

**ԱԿԻՄ.**—Քեզ տեսնեմ, աշքիդ լուս են տվել:

**ՄԱՔՍԻՄ.**—Կփորձենք:

**ԱԿԻՄ.**—Ի՞նչ փորձես, աչքերդ հո խուփ չեն: Կապը քո վիզը կգցեն, իսկ իրենք աշխարհքում լին ու բոլ ման կպան:

**ՄԱՔՍԻՄ.**—Բա վոր եսպես մի բան ի՞նսի՝ մարկանց տեղ սկսեն մեքենաներ բանել: Բա են ժամանակը ի՞նչ կասես: Են ժամանակը ի՞նչ կասես, հայրիկ:

**ԱԿԻՄ.**—Են ժամանակը: (Պառվա): Են ժամանակ դուք կտանեք: (Կամացուկ): Զեզ կիսոնարհվեմ:

**ՄԱՔՍԻՄ.**—Ասածդ չմոռանաս, համ, յերբ կատարելու որը դա, խոսքդ կուլ չտաս:

**ԱԿԻՄ.**—Զե, վորդի, ի՞նձ չի հաջողվի եղ խոսքը կատարել: Զեզ վոչ ասաված կա, վոչ ել կլանք կունենաք:

**ՄԱՔՍԻՄ.**—(Զգուշուրյամբ): Բայց դու, հայրիկ, դու առաջվա պես հավատնում ես: Հավատնում ես դու, արդյոք, աբուս, անշունչ տախտակի կտորներին:

**ԱԿԻՄ.**—Գնա բանիդ, Մաքսիմ... ի՞նձ մի զայրացնի:

**ՄԱՐԴԻՄ.** — ԶԵ վոր, հայրիկ, զու տերտերի ձեռը պաշելու թարկը  
տվել ես:

**ԱԿԻՄ.** — (Համբեռոյւնից դուրս գալով) : Թող գնա, ասում եմ,  
թե չե... կամ իս, կամ զու:

**ՄԱՐԴԻՄ.** — Ապրիր քեզ համար հանգիստ, հայր, յես ամենեին  
ել չեմ ուզում քեզ բարկացնել: Յես գնացի: (Մարիային)  
Քուրիկ, ժողովի իեկ, եւ: (Դուրս ե զնում):

**ԱԿԻՄ.** — (Նսեր դրմիում ե պատի տակ դրած տարուրեսին): Դուրս  
ե գալիս, վոր ապրելու ճար չկա: Միսը յեղունկից պոկում  
են, ապրեցինք, ապրեցինք, —վերջներս փուչ յեղափ: Են չե-  
ղափ, ինչ վոր պետքն եր: (Նսած ե խորը մասմունիքի մեջ:  
Մարիան աչքը յերեսը զցած՝ նայում ե նրան, բայց սա չի  
նկատում: Ներս ե մտնում Պելագյան):

**ՊԵՂԴԻՅԵՅԱ.** — (Աղջկան): Քա ելի եղ անտեր գիրքը: Յես ել պի-  
տի ասեմ, թե աստված ինձ աղջիկ ե ալել: Աչքդ չթարթած՝  
տունը վոտ ե առնում-գնում: Չինի թե հեռանաս—ցցի պես  
տնկված պիտի մնաս: Իմ սիրաը վկացում ե, վոր մի բան կա:  
Կամ գոռնիները պիտի սոված թողած լինեք, կամ հավերից  
մեկը՝ տուրը տպած: (Պատուա): Մարիա, գոռնիներին բան-  
ան տվել ես, թե չե:

**ՄԱՐԻՄ.** — Ի՞նչ ձենդ գլուխդ զցիր, մայրիկ, ինչ վախտ ե՝ շփոթն  
արել եմ: Մայրիկ, չեմ իմանում, թե ինչնու զիրքը ձեռքս  
առնելուց՝ սիրտդ խառնում ե՝ հանգիստ չես տալիս:

**ՊԵՂԴԻՅԵՅԱ.** — Դանդու, զանդու, բա իմ զարդն ու ցավը գուք չեք՝  
ով ե, ուրիշ երեխա ունեմ: Մալին՝ տեր, վորդուն՝ ներ,  
աչքդ վրեն պահիր, են ե հա լավ կլինի: Հենց վոր վոտի  
քաշիր, ել տերը չես, ելած-չելածը հող ու մոխիր կլառնա:  
(Ակիմին), Քա հալիվոր ջան, բա դու խի յես թերգ կախ  
զցել:

**ԱԿԻՄ.** — Մեր թեհերը խուզել են, այ պառագի Յերկախս ել ցախա-  
վելով քշում են աղբահորը:

**ՊԵՂԴԻՅԵՅԱ.** — Ե՛, սրտամեռի մարդ, իրան-իրան զիտունութիւն  
ե անում. իմանում ե, թե միջից բան պիտի դուրս գա:

**ԱԿԻՄ.** — Ա՛յ պառագ, ես մենք զնուր ենք ապրել:

**ՊԵՂԴԻՅԵՅԱ.** — Նոր տնավերի հալիվորը խելքը թոցը ե, ինչ ե, —  
Քա այ մարդ, բան ունեօ՝ բան ասա, բան: Թե չե՝ զուր ու  
մուրս զնուն ե: Թառի հավերը համբրել ես եսոր:

**ԱԿԻՄ.** — Ե՛ս, քո եւ, քո հավերի ել... Աշխարհն աշխարհքով, զու ել  
քո հավերով:

**ՊԵՂԴԻՅԵՅԱ.** — Ուզում ե ժամք լինի, աշխարհքը կըակ ընկնի՝ եր-  
վի, քչուլը քամին տանի—ելի պիտի իմ հավերը համբրվեն:  
(Աղջկան): Ե՛ս, գետինը դար անես, իսկի վեճն ել ե: Բա  
քուացել ելիք—վախտին գլխի ընկնելիր, քանի հավերը  
թառն ելին—համբրելիր:

**ՄԱՐԻՄ.** — Ա՛յ մեր, բոլ ե ձնկըռթաս, գե գնա, ելի:

**ՊԵՂԴԻՅԵՅԱ.** — (Մահնակալի մոս ինչ վոր բան ե փնտում ու պա-  
տառութիւն գուալա յե զնում): Ե՛ս, լուսդ քուանա, բա բո-  
լիցդ ել չես ամաչում. ես անտերը բա ել հագնել կլինի:  
Սնբան թուլ-գոթի: Կասես չորան լինի—ձեռիցը վոչ կար ա-  
դալիս, վոչ կարկան, վոչ ել եփել-թափել թողնես՝ լավ  
նստի, սատանի պլազալիչն առնի ձեռն ու՝ պլազ՝ պլազ-  
պլազ... Ա՛խ, անաստվածի աղջիկ, իս քանի կամ—գու-  
կապրես, իսկ թե ինձնից հետո քո որն ինչ կղառնա, չեմ  
իմանում: Մարդ չի իմանում, թե ինչ ե—ես զահրումար  
գըքերի մեջ կասես թի մեղը կա:

**ՄԱՐԻՄ.** — Մարդիկ, մարդ թողնի՝ քո ձեռից տնից փախնի: Դե  
լավ, ելի, մի անգամ տաիր—պրծար, ել ինչ ես անում երկեն  
ալելու:

**ԱԿԻՄ.** — Զեն քաշի, այ պառագ, ի՞նչ ես ուզում երեխից:

**ՊԵՂԴԻՅԵՅԱ.** — Քա մագ-խուզածի հալիվոր, զու ել թեքվար նրանց  
կողմը: Ումուգ արա՝ թե բան գուրս գա:

**ԱԿԻՄ.** — Ո՞ւր ե, չի ել դուրս գալիս:

**ՊԵՂԴԻՅԵՅԱ.** — Բա դուրս չի գա, բա: Մութն ընկալ հավերն հլա-  
չենք համբրել Քեզնից ի՞նչ հասկացանք: Ե՛լի յես պիտի  
գնամ: Յերեք վերստ բեզրած արի ու հիմա ել վոտի վրա  
կանգնի: (Դուրս ե զնում):

**ԱԿԻՄ.** — (Պատրաստվում ե ժողովի զնալու): Կդնամ: Մենք չենք  
մեռել, վոր նրանցից յետ մնանք: Մենք մեր խոսքի վրա  
պինդ կկանգնենք: (Աղջկան) Իսկ զու, Մարիա, լավ կլինի,  
վոր ժողովի չգաս: Ի՞նչ ասես, վոր այնտեղ չպատահի: Ա-  
ռանց կոիվ չի անցկենա: Ի՞նչ կա, ել ժողով չես տեսել:  
Մեկ ել տեսար, Յեզորը մազերգ փաթը թեց ձեռը: (Մարիան  
չի պատախանում: Ակիմը դուրս ե զնում: Մարիան հազնիւմ  
ե՝ ժաղսի զնա: Ներս ե մտնում Պելագյան):

**ՊԵՂԴԻՅԵՅԱ.** — Զասի, վոր եղանակ կլինի, սիրտս վկայում եր: Իմ  
են ազիզ հավը չկա: Նիշուն թուլթուշիկ չկա: Վոտս կոտը-  
վեր՝ քավորանց չգնալի: Ի՞նչ մի հավ եր: Յանի-յանի-յանի

դադս տվեց: Ախ իմ ածան Թութուշիկս: Վիզը կասես կռուն-  
կի վիզ լիներ, կաքավի պես շորոր եր տալիս: Կատարն աք-  
լորի կատարի նման գիք բռնած՝ մարդու խելք տանում եր:  
Զանս դուրս դա, լուսս խավարի: Եսպես ել հարամի հարե-  
վաններ կլինեն, տներդ քանդիկ, վոտդ քաշեցիք—ել տերը  
չես: Իրենց թեսրի միսն ուտեն: (Պառզա): Մարիա, չտե-  
սար՝ առավոտը հավերը վար կողմը գնացին:

ՄԱՐԻԱ.—Լուկիրինց տան կողմը գնացին:

ԳԵՂԱԳԵՅՑԱ.—(Աջուուծացած): Ե՞ն ե, ելի: Նրանց քամբախից բա-  
ցի՝ ել վճրտեղ պիտի լինի: Եսոր քթոցի տակը կդնի, եզուց՝  
կճուճը: Ենտեղ ե, ենտեղ:

ՄԱՐԻԱ.—Ի՞նչ ես իմանում—գուցե ուրաւըն և տարել: Ի՞նչու յես  
անտեղի ուրիշների մեղքն առնում:

ԳԵՂԱԳԵՅՑԱ.—Ի՞նչ պիտի մեղքն առնեմ: Հիմա տես վանց գնամ,  
ման գամ, Թութուշիկս գտնեմ-բերեմ: Մեռած ել լինեմ—  
կրտնեմ: Տեսնում ես—ի՞նչ անամոթն ի եղ Լուկերիան: (Դուրս  
ե գնում: Մարիան կանգնում է հայելու առաջ: Ներս ե վա-  
գույն Յեզու Միրոնիչը):

ՅԵԳՈՐ ՄԻՐՈՆԻՉ: (Նտաղով): Մարիա, եղ ուր ես գնում:

ՄԱՐԻԱ.—Քեզ ի՞նչ: Ել ի՞նչ գժի պես ներս ընկար:

ՅԵԳՈՐ ՄԻՐՈՆԻՉ: —Ի՞նչպես թե ի՞նչ: Միթե յես քեզ հետ գործ  
չունեմ: Բա ել ի՞նչ մարդ, վոր կնկա հետ գործ չունեմ:  
Ե՞ս բողելիս պատրաստվիր:

ՄԱՐԻԱ.—Ո՞ւր պատրաստվիմ: Ե՞լի սատաներդ եկան:

ՅԵԳՈՐ ՄԻՐՈՆԻЧ: —Քեզ ասում եմ՝ պատրաստվիր: Լսում ես,  
թե չե:

ՄԱՐԻԱ.—(Բորբոքելով) Ել ի՞նչ կպար յախես: Վոր կնիկդ ելա—  
կրակն ընկա: Ի՞նչ կարծում ես թե ուր քես՝ դենք պիտի  
գնամ: Իսկի ել չե: Քեզ հետ եմ, ախր ուրու ի՞նչու համար  
պիտի պատրաստվեմ:

ՅԵԳՈՐ ՄԻՐՈՆԻЧ: —Յես քեզ հրամայնում եմ: Շամա պիտի խոսես:  
Դե շնուտ: (Այժով չափելով երան): Ախ, հա... դու հագնված  
ես: Գնանք: (Բառում է դեպի դուռը):

ՄԱՐԻԱ.—Շան պիտ հարբած ես: Զեռ քաշի: (Զեռից պրծնում ե):

ՅԵԳՈՐ ՄԻՐՈՆԻЧ: —(Անվնուականուրյամբ փոքր ինչ կանգ է առ-  
նում): Ի՞նչ: Զեռ հնազանդում: Աւրեմն յես...

ՄԱՐԻԱ.—Մի հասկացրու տեսնեմ՝ ուր ես կանչում, ե:

ՅԵԳՈՐ ՄԻՐՈՆԻЧ: —Զինիք իներդ թոցը ես: Զինիք—չես հաս-  
կանում: «Ո՞ւր, ուր»: Ժողովի: Դե, զե, շնուտ:

ՄԱՐԻԱ.—Ժողովի: (Յիծաղում ե): Ուրախությամբ, ինքս ել ու-  
ղում եի:

ՅԵԳՈՐ ՄԻՐՈՆԻЧ: —Հիմա այնաեղ քվերկությունը կսկսեն: Վայ  
թե ուշանանք: Պրծնելուն պիս—թաղ արի: Գնանք, գնանք:  
ՄԱՐԻԱ.—(Տեղուտեղը կանգնել ե, առանց հասկանալու, բե բանն  
ինչ ե): Դու կազ գժվել ես, կամ թունդ հարբած ես:  
ՅԵԳՈՐ ՄԻՐՈՆԻЧ: —Ժամանակ չունեմ, ասում եմ: (Բոնում է  
Մարիայի ձեռիքը): Հասկանում ես: Յես ձեռք կբարձրացնեմ,  
դռն ել բարձրացրու: Աչքդ բնձ կպահես:

ՄԱՐԻԱ.—Ե, հա... Լավ: Գնանք: (Դուրս են գնում: Բեմի նետեվը  
հայր դժմամ ե: Խալույն ներս ե մտնում Գեղագեյան՝ հայր  
ձեռիքին):

ԳԵՂԱԳԵՅՑԱ.—Գտա: Ինձնից բան պահեն: Սառւ ե՝ հավա ինքն  
իրեն ե քթոցը շուռ տվել գլխին: Բա վոտքիքն ով ե կա-  
պել: Ե՞լի ինքը: (Փարփառում է հավին): Իմ ձրպառնա: Քթո-  
ցի տակ չարչարվել ե՞ս, հա: Հանաք բան հո չի ամբողջ որը  
բանս նստել: Ալի եղ կուպաշտը: Են, են, են Լուկերիան,  
Լուկերիան: (Լամպը լուսավորում է, արձակում է հավի  
վստերը) Տանեմ, տանեմ,—թություշիկ ջան, տանեմ, բնկա-  
լիդ դնեմ՝ հանգիստ քնիր: (Հավը ձեռիքն դուրս է գնում:  
Բաց դոնից ներս ե խումամ ճաղնիք ալինուիր: Գզգզած մա-  
զերով, մոալ, ծանր սպասցնելով ներս ե մտնում Ակիմը,  
անցնում ե, պառկում է մահնակալին, սինում ե):

ԳԵՂԱԳԵՅՑԱ.—(Ներս մենելով ականջ է գնում): Բա Ակիմ, եղ դու  
ի՞ն, հալիվոր: Ի՞նչ ե, ո՞ս հիվանդ չես:

ԱԿԻՄ.—(Խուլ ձայնով) Հիվանդ եմ: պառափ: Են ի՞նչ ե ենտեղ:  
Վայ ժողովուրդ, վայ: (Ներս է վագում Մարիան):

ՄԱՐԻԱ.—(Մորը, նուզիած) Մայրիկ, ենտեղ են ի՞նչ ե կատար-  
վում, են ի՞նչ ե կատարվում: Հիմա մարդ կուպանեն (լայիս ե):

ԳԵՂԱԳԵՅՑԱ.—Աղջի ջան, զրոզ ել չի դիպչի: Մեր ի՞նչ գործն ե,  
ի՞նչ դարդներս ե՝ վոր լաց լինենք: (Պառլազից նետս): Թու-  
թյուշիկս զտել եմ, ե, Մարիա ջան, քթոցի առկր նստած  
եր:



**ՄԱՐԻԱ.** — Ըստըություն յեղավ: Յես Մաքսիմի հետ ձախ տվիր:  
Ըսկած հողերը — բոլորի վրա: Մեզ ու Միտինեսց՝ չորս տանս՝  
«Սպիտակ կտավները», «Սոգոլանները», «Ղում սալներն» ու  
«Շոռաքյաթները». «Ղղավներն ու «Սելավները» — կոմունա-  
յուն. իսկ Նոր-թաղին՝ «Գրուղի գլխներն» ու «Մայիլները»:  
Գյուղում մենակ տաս տուն կմնա:

**ՊԵՂԱԳԵՑՅ.** — Ուզում ե՞ բոլորն ել մնան, մեզ ինչ: Բան ու գոր-  
ծները կտրվել ե, հմայի ել մասխարությունի յետեից են ըն-  
կել: Ի՞նչ, չինի թե ժողովում կնանիքը քիչ ելին:

**ՄԱՐԻԱ.** — Շատ ելին. համարյա բոլորը: (Փողոցում աղմուկ ե. ձայ-  
ներ են, Պեղագեցյան ու Մարիան նետ են նայում: Դուռը լայն  
բացվում ե, արևաշաղախ դեմքով ներս ե ընկնում Յեզօր Մի-  
րոնիչն ու Մարիայի վրա հարձակվում):

**ՅԵԳՈՐ ՄԻՐՈՆԻՉ.** — (Կատաղած) Տն փչացած, զու ումը ձախ տվիր:  
(Ակիմը պատկած տեղից բարձրանում ե. Մարիան յետ-յետ ե  
հաւախում): Բա յես ինչի՞ համար եկա քո հետեւից, ը՝-ը՝:

**ՄԱՐԻԱ.** — (Հաստատուն) Թող տուր ինձ: Դու իմ մարդուն ես, յես՝  
քո կինը: Բայց յես քո ստրուկը չեմ: Ակնջիդ գինդ արա:  
Եսորվանից ել չեմ ուզում քո կինը լինել: Եղ հո իմ կա-  
տարյալ իրավունքն ե: Բավական ե՞ յես քո պոչը բռնեմ:

**ՅԵԳՈՐ ՄԻՐՈՆԻՉ.** — (Ուզում ե Մարիայի մազերից բռնել, բաժի-  
նակն ե միում ձեռքի մեջ) Փչացած: Անպիտան: (Ներս ե վա-  
զում Մաքսիմը):

**ՄԱՔՍԻՄ.** — Հեռու: Մատ չգիպցնես: (Կանգնում ե Մարիայի ու  
Յեզօր Միրոնիչի արամերը: Յեզօրը հարձակվում ե Մաքսիմի  
վրա, բայց Մաքսիմը ճարպիկ բռնում ե նրա ձեռքը: Ակիմը  
մարտ մած՝ թե ե ընկել մահնակալին):

**ՊԵՂԱԳԵՑՅ.** — (Արտավալից աշերով, Մարիային) Մարիա, այ աղ-  
ջի: Ել ինչու յես կանգնել: Վաղ տուր քավորի հետեւից... Թեղը  
կանչի: (Թոշում ե, դուրս ե վազում: Փողոցի կողմից աղմուկ):

**ՄԱՔՍԻՄ.** — (Դեպի Մարիան) Դրա հետ վճնց անենք, այ քուր:  
**ՄԱՐԻԱ.** — Դուրս զցիր նրան, Մաքսիմ, թող կորչի: Յես ել չեմ  
ուզում նրա հետ ապրել: Եսորվանից նա իմ մարդը չի:

**ՅԵԳՈՐ ՄԻՐՈՆԻՉ.** — (Փորձում ե ձեռքից պրծել) Բաց թող, սա-  
տանս: Կոպանեմ:

**ՄԱՔՍԻՄ.** — (Յեզօրին դեպի դուրս ե լայն արձակ պցում):  
Նապարէ ե: (Յեզօրին դուրս ե բորբոք ու դուան աղմար զցում):

**ՅԵԳՈՐ ՄԻՐՈՆԻՉ.** — (Դուռը ծեծելով, շարացած) Մտհան չանես,  
Մաքսիմ: Մտհան չանես: Եղ քեզ վրա եժան չի նստի: (Ա-  
կիմը պառկամ ե):

**ՄԱՔՍԻՄ.** — (Պառզայից նետո) Ե՞հ, քուրիկ, բաններս լավ ե: Մի  
անգամից՝ յերկու գործ:

**ՄԱՐԻԱ.** — Բա կոմիզը չես ասում: Յես վախենում ելի, թե մար-  
դասպանությունն կլինի:

**ՄԱՔՍԻՄ.** — Ի՞նչ կոմիզ: Մի քիչ երար ճանկոեցին: Յես գեռ ա-  
վելի վատ բան եմ սպասում: Եսոր վոր հրդեհ չլինի, շատ  
բան ե: Ժողովուրդն իրար վրա շատ-շատ են շարացած:

**ՄԱՐԻԱ.** — Յեղբայր, հիմա իմ մարդուց քեզ զգուշ պահիր, նրա  
ձեռից ինչ ասես՝ կգա: Ալեքսեյ Միտրոֆանովիչից ու գու-  
քանչուց ել քեզ պահիր: Յես բան եմ լսել... Քեզնից վա-  
խենում եմ:

**ՄԱՔՍԻՄ.** — Ե՞հ, ինչից պիտի վախենամ: Առանց արյունի բան  
գուրս չի գա: Զե վոր նոր դարագլուխ ե գալիս: Նոր կյանք  
ե ծնվում: Ենքան ել մեծ դարդ չի, յեթե մեկը...

**ՄԱՐԻԱ.** — (Բնդիմառում ե): Մի ասի, չեմ լսում: Առանց են ել լավ  
կյանք կգա:

**ՄԱՔՍԻՄ.** — Իսկ հավատամւմ ես դու, քուրիկ, այդ վերահաս լավ  
կյանքին:

**ՄԱՐԻԱ.** — Հա, հա, Մաքսիմ, հավատում եմ...

**ՄԱՔՍԻՄ.** — Լավ ե, վոր հավատում ես: Ինձ ի՞նչ պիտի պատա-  
հի, շարունակիր սկսածք: Իսկ առայժմ հայրիկի մոտ կմնաս:  
Այն, բայց ուր ե հայրիկը: Նրան մի բան պատահած չլինի:  
(Ակիմը վեր ե կենում բախտից, յեկ ուժը չբարձնելով Մարի-  
ային ու Մաքսիմին, ծունկ ե չոգում սրբավատիերի առաջ—ա-  
ղոքում ե: Մարիան ու Մաքսիմը հետևիում են հար: Փողոցից  
աղմուկի ձայն ե գալիս: Ակիմը ըրունեները շարժում ե, խա-  
չակնիում ե: Լուսամուտները փոքր ինչ լուսավորվում են սկրի-  
ված նրգենի ըսդերից: Մարիան վախտից յետ-յետ ե զնում դեպի  
լեղբայրը):

**ԱԿԻՄ.** — (Ուղիղ դիրք ընդունելով) Ո՞վ ե ես բանի պատճառը:  
Ըստ ի՞ւ:

**ՄԱՔՍԻՄ.** — (Ուժեղ կերպով): Պատճառը, հերս, մեր իսավարամտու-  
թյունն ե, են, վոր քեզպեսների սանձը մինչեւ որս ել  
կուլակների ձեռին ե: Բայց եղանակ բաներից մենք վախե-  
ցողը չենք, հայրիկ, հինը մոխիր կղառնա, նորը կշինվի:  
(Հրդենի ըսդերը լուսավորում են խնդիրը: Փողոցում ահա-  
զանիքի ձայնը միախառնվել ե ամբոխի աղմուկին):

ՎԱՐԱԳՈՒՅՅՐ

### III ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

**Ակիմի** խրճիթն ագարակում: Սեղան, նստարաններ: Առաջակողմի անկունում սրբապատկերներ: Սրբապատկերների առաջ կանթեղ և կախված: Վաղ առավոտ ե:

**ԱկիՄ.**—(Ծերացած, նիմարած, դանդաղ սպապացնելով ներս և մտնում, նստում նստարանին): Ես ել քեզ աղարակը... իմ կալվածը: Մարդկանցից պատով կտրվել եմ—ինձ գերեզման շինել: (Պառված):

**ՄԱՐԻԱ.**—(Ուրագ ներս մտնելով, բղրի կտորը ձեռքին) Հայրիկ, յես կոլեկտիվ եմ գնում: Ես նստակը նոր տվին ինձ: Խնդրում են, առանց ուշանալու գնալ: Մաքսիմի գիրը չի, վախենում եմ՝ ենտեղ մի բան պատահած կլինի: (Ուղղվում է դեպի դռություն):

**ԱկիՄ.**—Կաց, Մարիա:

**ՄԱՐԻԱ.**—(Հետ դառնալով) Ի՞նչ ես ասում:

**ԱկիՄ.**—Մեր յերեսից դու ինչո՞ւ եստեղ տրորվես, միանգամից գնա ենտեղ:

**ՄԱՐԻԱ.**—Յես ուրախությամբ կդնամ: Բայց կարծում եմ, վոր ժամանակն ե՝ մենք բոլորս միասին-ընտանիքով մանհենք: Զե՞ վոր դու ինքդ այս կյանքով տանջվում ես, հայրիկ: Հը՛, համաձայն ես:

**ԱկիՄ.**—(Գլխով բացասական շարժում է անում) Զե՞... Անպետք ենք մենք՝ ծերերս ծեր արդ նոր կյանքի համար: Ինչպես ծնվել ենք, այնպիս ել կմեռնենք:

**ՄԱՐԻԱ.**—Ինչո՞ւ համար: Ինչո՞ւ, հայրիկ, այդպես համառում ես: Թե՞, դու գեռ չես տեսնում վորն ե լավը: Ե՞ն, ցածրություն, հայրիկ (դուրս է գնում):

**ԱկիՄ.**—(Մենակ) Յես չեմ հասկանում արդ նոր կյանքը: Այդ

կյանքի հիմքն ինչ ե: (Պառված) Բայց դուրս ե գալիս, վոր մերը խորտակվում ե: Մեզ—փոսն են լցնում... Մենք վոր չենք ուզում, ուրեմն—ահղներս փոսն ե: (Մածմունքի մեջ ե ընկնում):

**ԱԼԵՔՍԵՅ ՄԻՏՐՈՖԱՆՈՎԻՉ.**—(Հարբած ներս և մտնում) Հարգանքներս: Իմ բարեկամին: Ակիմ Պախոմիչին: (Բարեվում ե) Ի՞նչ ես գլուխդ կախել: Ելի ի՞նչ և միտդ ընկել: Զլինի՞ աղիդ համար ես դարդ անում: Ի՞նչ մտանես—են գտանես: Ցես ես իմ ասում:

**ԱկիՄ.**—Տղի համար, Ալեքսեյ Միտրոֆանովիչ, դարդ անելու բան չկա: Ես կյանք և կառուցում: Իսկ մենք ել... Մենք ի՞նչ ենք՝ անում:

**ԱԼԵՔՍԵՅ ՄԻՏՐՈՖԱՆՈՎԻՉ.**—Ամա շինել ե, հա... Բավական ե: Իսկ յես ու գու ամենագլխավորն ենք: Մենք գեռ մեզ ցույց կտանք, մեր հերթը կդա:

**ԱկիՄ.**—(Վոտից գլուխ չափում է Ալեքսեյ Միտրոֆանովիչին) Ի՞նչ ե պատահել ձեզ, Ալեքսեյ Միտրոֆանովիչ: Չտեսնված բան—թունդ հարբած ես... Են ել եսպես շուտ՝ առավոտյան:

**ԱԼԵՔՍԵՅ ՄԻՏՐՈՖԱՆՈՎԻՉ.**—Պատահել ե, Պախոմիչ, անսովոր բան ե: Եսոր ջոկ բան ե: Տղիդ քեզը վճնց ե:

**ԱկիՄ.**—Վոտինչ, լավ ե: Առաջ նրանք ամեն ինչ ունեցին, իսկ հիմա տնտեսություն են սարքել: Մաքսիմը նրանց նախագահն ե: (Պառված) Ել հարցնելու ինչ ե: Դու ինձնից լավ զիտես նրա մասին:

**ԱԼԵՔՍԵՅ ՄԻՏՐՈՖԱՆՈՎԻՉ.**—Գիտեմ..., ձիշտ ե, վոր գիտեմ: (Պառված) Յես մեր կազմակերպության համար եմ յեկել քեզ մոռ: Այսինքն՝ վոր գու մեր մարդը լինս: Այս Մենք լավ մարդկանց կողմն ենք, վոչ թե բոսակների: Միթե ալզախի մարդը կարող ե իշխանության գլուխ կանգնել: Ճղված շալվարով... Միթե կարող ե: Ինքն ինչ ե, իր իշխանությունն ինչ լինի: Հլա մի մտծիր, Պախոմիչ:

**ԱկիՄ.**—Կասես թե կալվածատերերի կողմն ես քաշում, Ալեքսեյ Միտրոֆանովիչ: Զլինի՞ ուզում ես, պապերիդ ժամանակը յետ բերես:

**ԱԼԵՔՍԵՅ ՄԻՏՐՈՖԱՆՈՎԻՉ.**—Են վոսկի ժամանակ եր: (Այս է բառում) Միայն տեսնում ես, զժվար ե: Գոնե մի մազաշափ ել թեքենք դեպի են:

**ԱկիՄ.**—(Տեղից վեր կենալով) Գնա, Ալեքսեյ Միտրոֆանովիչ,

գնա, բարեկամ, քո ճանապարհող գնա: Յես ալդպես մադր-  
կանց հետ ճանապարհ չեմ գնա: Հայրս մեռնելիս ինձ կատ-  
կել ե աղաների մտրակը չմոռանալ: Ինձ հրամայում եր աշ  
խատավորական կյանքով ապրել, պատվիրում եր ժողովրդ-  
արդարության կողմը լինել:

**ԱԼԵՔՍԵՅ ՄԻՏՐՈՅԱՆՆՈՎԻՉ**.—(Ծիծաղում ե) Ուրեմն դեպի կոյ  
մունա: Ուրիշ ճանապարհ չկա ել... Մանր տնտեսությունը  
չի կարող գոյություն ունենալ (Պառզա) Այ, թե ինչ: (Ծի-  
ծաղում ե, ապա փախում ե ականջին) Կարող ե պատահել  
այսոր հարեաններից քեզ մոտ գան: Մտադիր են քեզ իւլնդ-  
րել, զոր դու միջնորդես՝ նրանց կոլեկտիվին միացնելու:  
(Հանկարծ խոսն լինդիատում ե, ծիծաղում ե) Այս, թող գան...  
Ում առաջ միջնորդելու:

**ԱԿԻՄ**.—(Աչքը անվեռում Ալեքսեյ Միտրոֆանովիչի աշխերին):

**ԱԼԵՔՍԵՅ ՄԻՏՐՈՅԱՆՆՈՎԻՉ**.—(Հայացին պատասխանում ե) Գի-  
ֆիս լավ գախտն ե... Թեֆով եմ: (Նա իսկույն փոքր ին  
զգաստանում ե) Գլխից դուրս տվի—չգիտեմ թե ինչ...  
Ծուտի-պոտի բաներ: Ավելի լավ ե գնամ: Ախր յես են գըլ-  
խեն եմ դուրս լեկել՝ ժամ գնայու:

**ԳԵԼԱԳԵՅԱՆ**.—(Ներս մտնելով) Լավ բան են արել, Ալեքսեյ! Միտ-  
րոֆանովիչ, ժամերը դատարկել են: Պառավելիրս ել ուր  
գնանք: Ել ում առաջ աղոթք անենք:

**ԱԿԻՄ**.—(Անրուկ, խոսակիցների համար անսպասելի) Այս, ժամերի  
դատարկելու ժամանակը լեկել ե: (Ալեքսեյ Միտրոֆանովիչը  
յետ-յետ նայելով դուրս ե գնում):

**ԳԵԼԱԳԵՅԱՆ**.—Եղանակ... Յերեսում ե, նեռը մտնում եր, հա մտնում  
քեզ ու մտավ: Վերջին որերը հասել են: (Առավտոյան զան-  
գերը հանում են: Պելագեյան խաչակինում ե): Կանթեղը պիտի  
լուս տալ:

**ԱԿԻՄ**.—Բավական ե զրանց դուլ լինես, հարկավոր չի:

**ԳԵԼԱԳԵՅԱՆ**.—(Տուփը փայր ե գցում. լուցիին ձեռքի մեջ հանգչում  
ե) Ելի ինչ ե պատահել քեզ, հալիկոր:

**ԱԿԻՄ**.—Վոչինչ: (Ցույց ե ասիս սրբապատկերները) Դուրս գցի ալդ  
կուռքերը:

**ԳԵԼԱԳԵՅԱՆ**.—(Շվարած տեղի ու տեղը կանգնել ե):

**ԱԿԻՄ**.—(Հուզիած, տաքացած) Յես իմ ամբողջ կյանքում աղոթել  
եմ ալդ պատկերների առաջ: Զոքեչոք եմ արել առաջները:  
Բայց նրանց ինչ վեցն ե: (Պառզա) Կորցրու:

**ԳԵԼԱԳԵՅԱՆ**.—(Խաչակինում ե) Իսպան քե Քրիստոս: Խելքի լիկ,  
Ակիմ, խելքի լիկ:

**ԱԿԻՄ**.—(Ձեռքով սեղանը բխացնելով, շարացած) Պելագեյա, մեզ  
խարել են: Ապրելու ճար չկա: Կուզես՝ աղ գցիր վիզդ (զար-  
կում ե ծնկներին):

**ԳԵԼԱԳԵՅԱՆ**.—(Աղոք մրմիջալով՝ սրբապատկերն իջեցնում ե. նրա  
ձեռները դողում են):

**ԱԿԻՄ**.—(Զարացած) Եղ ինչու յեր լեկել: Գալը գատարկ չեր:  
Սիրոս վկայում ե՝ կապ ե գցում վզներս... (Մոտենում ե  
Պելագեյին): Սատանն մտել ե իրեն... (Հեղիանելով նայում  
ե Պելագեյին, վոր սրբապատկերը բռնել ե ձեռին) Ել բնչ հս  
ցցվել ե, բնչ: Հեռացիր:

**ՄԱՐԻԱՆ**.—(Հուզիած ներս ե վազում) Հայրիկ, կոլեկտիվի գլուխը  
փողձանք ե լեկել... Մաքսիմը չկա:

**ԱԿԻՄ**.—(Վեր բռնելով) Ի՞նչպես թե չկա: Ի՞նչպես թե՝ Մաքսիմը  
չկա:

**ՄԱՐԻԱՆ**.—Նա ու Տիրոն ես գիշեր քաղաքից գալիս են լեզեր: Զո-  
րի հետեւ Մաքսիմը վեր ե գալիս, վոր մեզ մոտ գա, իսկ  
Տիրոն ուղիղ գնում ե, իսկ Մաքսիմը չկա ու չկա... Վոչ  
ալստեղ կա, վոչ ալստեղ...

**ԱԿԻՄ**.—Հը... Սպասիր... Այ թե ինչու յեր նա լեկել...

**ՄԱՐԻԱՆ**.—Պետք ե վաղ տալ ձորը: Անտեղից արդեն գնացին:

**ԳԵԼԱԳԵՅԱՆ**.—Այդ ինչ բան ե, Մաշա, ի՞նչպես ե պատահել: Ա-

ման, վաղ տներ:

**ՄԱՐԻԱՆ**.—(Աճիստելով արխուրյամբ խոսել) Ո՞վ ե խմանում, գուցե  
մի տեղ գնացած լինի: Կզա: Յես մի վաղ տամ (Գուրս ե  
վազում):

**ԱԿԻՄ**.—(Պատին հենվելով՝ մտի մեջ ե բնկնում):

**ԳԵԼԱԳԵՅԱՆ**.—(Մոտենում ե Ակիմին) Ակիմ ջան, եղ ինչ ես անում,  
Ակիմ ջան,

**ԱԿԻՄ**.—(Պառզալից հետո) Գուրս ե գալիս, վոր պառապ, դեռ մենք  
որ ունենք քաշելու: Բայց թե տղին սրբկաները տակով են  
արել:

**ԳԵԼԱԳԵՅԱՆ**.—Թա եղ ինչ, եղ ինչ ես անում, Ակիմ ջան: Ախր եղ  
ինչ ես անում:

**ԱԿԻՄ**.—Խելքս չի կարում, վոր մեր Մաքսիմը կենդանի լինի:

**ԳԵԼԱԳԵՅԱՆ**.—Անտեղի բան ես անում... Ո՞վ, սիրա վոնց վոր  
կտրեն... Մաքսիմ ջան... (Խնկներին ե ասիս):

**ԱԿԻՄ.**—(Պառագայից հետո) Դու ինձ ես ասա, պառավ, ի՞նչպես ես  
կարծում, արտն ի՞նչպիս ե, լավ ե, թե չե:

**ՊԵՂԱԳԵՅԱԾԱ.**—Ի՞նչիդ ե պետք, Ակիմ ջան, իսու կմիկ ևմ—խելքս  
ի՞նչ ե կտրում:

**ԱԿԻՄ.**—Դու ճիշտն ասա, ճիշտը: Բա վո՞նց կլինի: Լավ ե, թե չե  
Ազարակի բանը լավացել ե, թե չե: Հը:

**ՊԵՂԱԳԵՅԱԾԱ.**—Ճիշտը վոր ասեմ, Ակիմ ջան, վոչ միայն չի լավացել—վատացել և ելի մի կերպ աջողացնենք գյուղը զնալ: (Նախասենյակում փառաձայն) Կասես միկը մեղ մոտ ե գալիս: (Ակիմը լուսամուտից նայում ե) Գլխացավանք ե, հանգստություն չկա: Ունեցածիդիդ ձեռը կրակն ես ընկել: Ժողովորդը դրդ ու ամազակ ե դարձել: (Ներս են մտնում Տրանիսն ու Արինան):

**ՏՐՈՖԻՄ.**—(Ակիմին) Բարով, կալվածատեր: Տեղդ վո՞նց ե. կալվածքում լավ ապրում ես, թե չե:

**ՊԵՂԱԳԵՅԱԾԱ.**—Ակիմ ջան, քավորին նստեցըն: Անցիր, քավոր ջան, անցիր, Սրբնան ջան:

**ՏՐՈՖԻՄ.**—Ընդունիր, ընդունիր սանահեր, պատգամավորությունն ընդունիր: Քեզ հետ կարեոր գործեր են: (Նախարարի մոտ ե բառում) Նստեցէք: (Տրոֆիմն ու Արինան նսում են Պեղագեյան դուրս ե գնում):

**ՏՐՈՖԻՄ.**—Տեսնում ես՝ կարեոր բան ե, վոր կին ենք ուղարկել: Ժամանակը թարս ե գնում, սանահեր:

**ԱՐԻՆԱԾԱ.**—Եղ ի՞նչ, չի՞նի՞ իմ մասին ե: (Դառնուում ե Ակիմին) Տրոփիմ քեսին ինձ հետ չեր ուզում քեզ մոտ գալ: «Թուք ինձ անպատճում եք, ասում եք, —հետո կին եք ուղարկում»:

**ՏՐՈՖԻՄ.**—(Արինային) Քեզ հետ ով ե խոսում, լեզվանի: (Ակիմին) Դու ասա, սանահեր: Կարծես նրանց չերկու թաղին ել տղամարդ չկա, կին են ընտրել քեզ մոտ ուղարկելու: Թո՞ւ, (Թիում ե):

**ԱԿԻՄ.**—Լավ, բա ձեզ ի՞նչի համար են ուղարկել մեղ մոտ:

**ԱՐԻՆԱԾԱ.**—Կոլեկտիվին միացնելու համար, հնրեղալոր:

**ՏՐՈՖԻՄ.**—(Արինային) Համ, հենց դու յել գտարու Ռուր ես քիթում:

**ԱՐԻՆԱԾԱ.**—(Ակիմին) Հորեղբայր, մեզ ուղարկել են այս պատճառվ, վոր բոլորի բանն ել բուրդ ե:

**ՏՐՈՖԻՄ.**—Զենդ: Յես քեզ չեմ ասում... Թո՞ւ, քեզ: (Թիում ե): Մազը յերկար հիմարներին են ուղարկում:

**ԱՐԻՆԱԾԱ.**—Լավ, դու խոսիր, դու, խելոք: Ել նստելը զուր ե, ի՞նչ ես զես ու զեն գցում:

**ԱԿԻՄ.**—Շարով ասա, քավոր:

**ՏՐՈՓԻՄ.**—(Արինային) Տեսնում ես, կարգով պետք ե (Ակիմին, կմիմալով, լցորեն, դանիալ): Դիտենք, վոր դու հասարակության մարդ ես, քավոր: Այս Մենք բոլորս ել լավ ենք ուզում: Ու լավ ել կանք ելինք փոտնում, բայց վատը դուքս յեկավ:

**ԱՐԻՆԱԾԱ.**—Վոչ տուտ ունի, վոչ տակ: Գիշերցերեկ աշխատես՝ մի մեքենա չես կարող առնել: Տավարի հետ ցեխի մեջ պիտի ապրես: Գլուխ պահելու համար զեսից-զենից պիտի ճանկիս:

**ՏՐՈՓԻՄ.**—(Արինային նայելով) Ախ զու, կաշաղակ, կաշաղակ:

**ԱՐԻՆԱԾԱ.**—Դե շուտ-շուտ ասա, ելի, ի՞նչ ես բուրդ զզող կնկա նման հա երկնցնում: Մարզու համբերությունն ել և կտրվում: Տնաշեն, կասես լծան տակի կոտան լինես:

**ՏՐՈՓԻՄ.**—Հետո, ի՞նչ զուրս յեկավ: Դե արի ու եսպես մարդ կանց հետ զործ արա: Են ի՞նչ ելի ուզում ասել, եւ (Մածում ե):

**ԱՐԻՆԱԾԱ.**—Ես ասիր՝ «բայց վատը դուրս յեկավ»:

**ՏՐՈՓԻՄ.**—Ախը ասում եմ, ե. կնիկ մի ասի—մի փուշ ասա քեզ, փուշ: Կրակ ու պատիժ ես, ելի:

**ԱՐԻՆԱԾԱ.**—Կրակ ու պատիժը դու յես:

**ՏՐՈՓԻՄ.**—Ուրիմն, սանահեր, մեզ ուղարկել են քեզ խնդրելու, վոր դու միջնորդես քո տղի առաջ՝ քո Մաքսիմի առաջ: Վոր մեզ... (Ինձն իրեն). Այ թե փուչ կնիկ ե, հա: (Խեր նայելով Արինային, շարունակում ե). Այ, սանահեր, լավը փնտռեցինք, բայց վատը գտանք: Հենց ամեն բանն ել եսպես ե: Ի՞նչպես յերեւմ ե, դուրս ե գալիս, վոր միասին ավելի հեշտ կլինի: Հրեն կոլեկտիվում տրակտորն ու ամեն տեսակի մեքենաներ են բանում: Ցորենը մարզու ուսերից ե գցում: Կորնդանը ծաղկում ե, տեսնողի քեֆը գալիս ե: Յոնջա յեն ցաներ: Շաղգամն ել հո—հրաշք ե, ամեն մեկը մի կճում:

**ԱՐԻՆԱԾԱ.**—Ի՞նչ ես զես ու զեն գցում: Ասում ես՝ կարգին ասա, թե չե՝ յես կասեմ:

**ՏՐՈՓԻՄ.**—(Առաջվանից արագ) Ու զրությունը քննելով, մենք համոզվեցինք, քավոր՝ մի կերպ հաշտվենք նրանց—կոլեկտիվականների հետ: Շատ կոխվագի արինք, բայց դուրս

յեկավ, վոր, պիտի հաշտվենք: (Արխինալին), Այ, դու, փուշ  
ու տատասկ, ինձ շակլացրիր: Ինզիլիզի խողի պատմությունն  
ել մոռացա: Խորհրդակին տնտեսությունից նոր են քերել:

**ԱՐԻՆԱ.**—Առանց եղ խողի յել կարելի յե յուշ գնալը իրար հետ  
խոսքներս մեկ անենք՝ մի ճամպով գնանք:

**ԱԿԻՄ.**—(Ծանր հոգոց ե խօսում): Ե՞ս, սիրելիք, Այդ բոլորը կա-  
րելի յե ու լավ ե, բայց թե... Զգիտեմ, թե ինչ ել ասեմ...  
եղ խոսքն ասելուց ել եմ վախենում:

**ՏՐՈՅԻՄ.**—Մեր խնդիրը մի մերժիր, քավոր: Այսպես ապրել ել  
չի կարելի: Մեր կյանքը կանգ ե առել... Ճահճի ջրի նման...  
Լավ չի:

**ԱՐԻՆԱ.**—Դու, հորեղբար, առաջ Մարիալից սկսիր ու հետո ինքն  
իրեն կցնա:

**ԱԿԻՄ.**—Բանն այդ չի... Մաքսիմ ել... Նա... (Ներս ե վազում  
Տիրը):

**ՏԻՏ.**—(Յերեսը ձեռքերի մեջ առած, արտասվելով): Հասան, Ակիմ,  
տղիդ ել հասան: Տղեդ նրանց խանգարում եր (Բնինում ե  
նասարանին ու լաց ե լինում):

**ԱԿԻՄ.**—Մպանել են:

**ՏԻՏ.**—Զորում... Հիմա կրերեն: Գտել են: Արյունաքամ ե յեղել...

**ԱԿԻՄ.**—Մյուպեմ... («Դուք զոհ զնացիք» յերգի ձայն ե զալիս)...  
ՏԻՏ.—(Վասքի յե կանգնում): Են եւ մենք ուզում ենինք հետեւց  
գնալ...

**ՏՐՈՅԻՄ.**—Մեռել ե քաջի պես... Հենց քաջ ել եր... (Դառնում  
ե բոլորին), Գնանք դիմավորելու: (Բոլորը դուրս են զնում,  
բացի Ակիմից, Ակիմը փոքր ինչ կանգնում է անշարժ, հետո  
լու լաց լինելով՝ տեղից պոկ ե գալիս ու դուրս վազում:  
Թաղման բայերզն ամելի բարձր ե լսվում):

## ՎԱՐՍԳՈՒՅՑ

## IV ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Կոմունայի տան առաջ, աջից՝ սեղան, սեղանի մոտ՝ աթոռ-  
ներ. առաջը՝ շարբ-շարք նատարաններ: Ակիմն ու Տիտը նստած  
են ծառի տակ, փայտի նատարանի վրա, տան լուսամուտին, հե-  
ռախոսի մոտ՝ Մարիան:

**ՄԱՐԻԱ.**—(Հեռախոսով խոսում ե): Լսում եմ... Մարիա կաստա-  
նովա՝ կոմունայի նախագահ (պատգա): Լավ: (Պատւզա):  
Չուշանաք բանվորների հետ ներկա լինել մեր հանդիսակար  
նիստին (Պատւզա): Ի՞նչպես: Զբաղված էք: (Պատւզա):  
Այդ դեպքում հիսուն բոպելով ուշ կակսենք: Շտապեցէք:  
(Բաժանում ե, հեռանում ե):

**ԱԿԻՄ.**—(Տիտին) Մարդն ինչ տեղ ե հասել, Տիտինիչ: Իմ աչքս  
շատ բան ե տեսել, իսկ հիմա աչքիս ել չեմ հավատում...  
Աշխարհը մարդուն փոխել ե:

**ՏԻՏ.**—Այ, Ակիմ Պախոմիչ: (Պատւզա): Հիմա յես այդ մասին չեմ  
մտածում: Այսոր մենք մեծ տոն ունենք, բայց Մաքսիմը,  
տեսնում ես, մեզ հետ չի:

**ԱԿԻՄ.**—Մի հիշեր: Հինգ տարի յե անցել, բայց մոռանալ չեմ  
կարողանում, կարծես յերեկ եր:

**ՏԻՏ.**—Նրանք մեր թշնամիներն են, վնասատուները:

**ԱԿԻՄ.**—Յեզորը հա փեսես եր. իսկ եղ խանութպանն ուրիշ  
բանի համար եր քավում:

**ՏԻՏ.**—Եղ ել քեզ ազգական ու բարեկամ: (Պատւզա, Փողովի ա-  
ռաջին զանգ): Առաջին զանգը տվեց, Ակիմ Պախոմիչ, յերկ-  
րորդն ել վոր տվեց, տեղները կրունեն: Յերկրորդ զանգից  
հետո ժողովը կբացվի: Այսոր Մոսկվան ռադիուով պետք ե  
վողջունի մեր կոմունան:

**ԱԿԻՄ.**—Յես կյանքի վրա շատ եմ մտածում: Բնությունը մար-

Դուն խելք ե տվել: Ոգը, ջուրը, հողը—բոլորը մարդն իր  
ոպախն ե ծառայեցնում: Թուշում ե, լողում ե, ահազին հե-  
ռավորության վրա խոսում ե... տեսնում ե...

Տիմ.—Որ ծերության փիլիսոփա դարձար, Ակիմ Պախոմիչ...  
Գրքեր ես կարգում: Շատ բան ես դատում:

Ակիմ.—Առանց այդ չի լինի: Կար ժամանակ, վոր կապը վիզո-  
ւի զցում, ապրելու ճար չկար: Ինչպես պետքն ե, կյանքիս  
մասին չելի մտածում:

Տիմ.—Իսկ հիմա նոր եմ զլիսի ընկել:

Տիմ.—Ակիմ Պախոմիչ, քո խոսքը ջանելների հետ պիտի լինի:  
Յերիտասարդությունը շատ բան չի տեսել չգիտի: Ամեն մի  
խելք խոսք հիմա թանգ արժե: Ազա մի նայի՞ր—որիկա-  
յություն, հարբեցողություն: Սրանից լավ բան սպասել չի  
լինի: Հասարակությունը վերակազմելը բոլորի գործն ե, ու  
համարձակ պետք ե վերակազմելը

Ակիմ.—Ել համարձակությունս վորն ե, յերբ մենք վերակառու-  
ցում ենք այդ հասարակությունը: Թշնամին չորս կողմներս  
բոնել ե, իսկ մենք մեր յերկրում կոմունա յենք կառուցում:  
Պետք եր, վոր այստեղ մի հինգ տարի յել մնայինք, յեփվե-  
լինք, վորպեսզի, այ, հիմա իմանալինք, թե ինչ մեծ գործ  
ե այդ: Ախր, Տրոֆիմիչ, ենքան ել հին բան չի... Հիշելիս  
մարդ մնում ե շվար... ինձ թվում եր, թե առանց մերի, ա-  
ռանց մեր սեփականության՝ անհնարին ե:

Տիմ.—Այս էակ, վերակառուցումն ել տեսանք: Մի վագոն ան-  
կարգություններ ու դառնություններ ել փորձեցինք: Իսկ  
հիմա հանգստացել ենք:

ՏՐՈՓԻՄ.—Են չի: (Նույ) Յերեկոյան համար ներկայացում են  
պատրաստում: Զարմանալի բան: Ամբողջ մեր ճանապարհն  
ուղում են մեզ ցույց տան: Ինձ շատ հետաքրքիր ե՝ ինձ  
ըհմի վրա տեսնել: Պետրուշկեն ծիծաղում ե, ասում ե՝ իսկ  
և իսկ դու կինես, կտեսնես: (Յերկրորդ զանգ: Տեղերը բանում  
են):

ՄԱՐԻՄ.—(Հեռախոսով): Կոմունալից են խոսում... Բանվորները  
յեկան մեզ մոտ: Դուրս յեկել են: Ազգակա: Մենք ժողովն  
սկսում ենք: Չենք կարող սպասել (Յաճանում ե):

ՏՐՈՓԻՄ.—Կնանիքն ինչ են տղաղնում: Ուղում են ասել, վոր իշ-  
խանությունը գրավել ենք—պրծավ գնաց: Ինչ կարող ես  
նրանց անել: Կորիվ անելու հո չեմ:

ՄԱՐԻՄ.—Դուրս ե գնում: Մեծամասնությունը նրան են նախում:  
Մո նոսած յերիտասարդին ասում ե: Վասիլիչ, գնա ռադիո-  
յի մոտ: Վագիմիրը չի յեկել այսոր դու նրա տեղը կաց:  
(Յերիտասարդը դուրս ե գնում ու իիչ հետո լուսամուտից յերե-  
փում ե բարձրախոսի ռուպորը): Հարգելիք ընկերներ: Մենք  
ժողովը հետաձգեցինք բանվորներին ելինք սպասում: Նրանք  
շուտով կդան, բաց ել հնարավոր չի նրանց սպասել: Հիմա  
են ժամանակն ե, վոր Մոսկվան մեզ պետք ե ռադիոյով  
վողջունի: Ուստի մենք առաջ վողջունի խոսքերը լսենք,  
հետո մեր ժողովը շարունակենք: Հարեան գլուղերից յեկած  
հյուրեր, ուշադրությամբ լսեցեք վողջունը: Հետո, մի ժամ  
հետո, Մոսկվայից գյուղացիական կոնցերտ կլինի: (Նայում  
ե ժամացույցին: Ամբողջի հայացքն իրեն ե սեվեռված): Աւ-  
շագրություն:

ՌԱԴԻՈ.—Ալո, Ալո: Խոսում ե Մոսկվան, Կոմինտերնի անվան  
կայարանից, հազար չորս հարյուր հիսուն մետր ալիքով:  
«Մեծ ճանապարհ» կոմունալի կոմունարներ, մեզ լսեցեք:  
Յոթ տարի ին անցել այս որից, ինչ դուք կոլեկտիվ կազմե-  
ցեք—սոցիալիզմի ճանապարհին առաջին ու իսկական փորձն  
արիք: Այժմ ձեր կոմունալի կազմակերպման հնգամյակն  
ենք տոնում: Թող այս մեծ որը ձեզ համար ել ավելի սերտ  
կապ ստեղծելու, ել ավելի փոխադարձ մտերմության որ  
լինի: Թող այս որը մշտական գյուղերին ու ավաններին ել  
ցույց տա լավագույն կուլտուրալի ճանապարհը: Թող այս  
որը վոչ թե խոսքով, այլ գործով ասի, թե ինչպիս պետք  
ե մարդիկ տնտեսություն վերակազմեն: Կապիտալիստական  
յերկեներում բանվորներն ու գյուղացիները գեռ շահագործ-  
ման ճնշման տակ են զանգում: Ասկան համաշխարհային  
հեղափոխության հրդեհը բանկվել ե: Հեռու չե այս որը,  
յերբ յերկրագնդի գլխին հորհուրդների դրույլը կծածանվի:  
Արի յեղեք, կոմունարներ (Լուրջուն: Էսլում ե մոտեցող  
բանվորների հայլիածիք):

ՎԱՐԱԳՈՒՅՅՐ





ՀՀ Ազգային գրադարան



NL0318910

13.527



ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

25.5.1957

891.71  
4-57